ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության տոնների և հիշատակի օրերի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի 1-ին հոդվածով նախատեսված լրացման ձևակերպումից պարզ չէ, թե ում հիշատակին է նշված օրը նվիրված, ինչպես նաև նախագծի հիմնավորման համաձայն՝ նախագծի նպատակն է բոլոր ժամանակների ռազմական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողների և այլ անձանց հիշատակը հարգելը, առաջարկում ենք նախագծով նոր լրացվող օրենքի 1.2-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 1.2. Հանուն հայրենիքի զոհվածների հիշատակի և խոնարհումի օր՝ նշվում է հունվարի 27-ին, ոչ աշխատանքային օր:»: